

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՆՈՒՄ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՆՈՒՄ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՆՈՒՄ

Կէս տարվայ գինն է 6 ռ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և և թէ արտասահմանում 10 ռուբլի, տարին և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., հինգ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌԻՍԿԱԿԱՆԱԿԱՆ:

Օտարաբարդագիտները պէտք է գիտեն հետևեալ հասցէով՝ Тифлисть. Редакция «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համառոտաբան միօրեայ վիճակագրութիւն. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Օրվայ հարցը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Հին և նոր մարտունակ. Թիֆլիսի հայերի վերադարձը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Երկրագնդի վեցերորդ մասը. Նամակ Թիֆլիսից. Նամակ Պարսկաստանից. ՀեՆՐԻԿԻՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ՀԱՄԱՌՈՒՄԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս տարի, աշնանը, կը կատարվի ամբողջ Ռուսաստանում մի օրվայ մէջ, ընդհանուր վիճակագրութիւն: Թաղաւոր կայսրը հաստատեց այդ վիճակագրութեան հիմնական կանոնները յունիսի 5-ին: Անդրկովկասի, ինչպէս և մի քանի ուրիշ տեղերի մասին կը մշակվեն լրացուցիչ յօդուածներ, համապատասխան այդ տեղերի առանձնապատկերներին:

Ի՞նչ նպատակ ունի առաջիկայ վիճակագրութիւնը: Նախ այս վիճակագրութիւնը պէտք է զանազանվի բոլոր այն ընդհանուր

նուր վիճակագրութիւններէ, որոնք եղել են մինչև այժմ Ռուսաստանում: Նրանք զիտաւորութիւն են ունեցել որոշել ժողովրդի քանակութիւնը՝ հարկերի և տուրքերի բաշխման նպատակներ համար. — մինչդեռ առաջիկայ վիճակագրութիւնը աչքի առաջ ունի ընդհանուր հասարակական և զիտանական նպատակներ:

Մեզ մօտ, Կովկասում, ընդհանուր վիճակագրութեան միջոցին, յաճախ տեղեկութիւն չէին ժողովում նոյն իսկ ընտանեկան կազմութեան, զանազան տեղերի յարաբերութեան մասին, այլ բաւականաճառ էին ծովերի թիւը որոշելով, որովհետև մեր երկրում ընդունված էր հարկը վերցնել ծովերից: Նման շատ էր ծխերի թիւը, — վերցվում էր շատ հարկ, և ընդհակառակը: Ռուսաստանի ներքին նահանգներում հարկատուութիւնը կատարվում է հասարակաւոր տղամարդկանց հաշուով, ուստի և վիճակագրութեան միջոցին արձանագրվում էր միայն այդ կէտը:

Առաջիկայ վիճակագրութիւնը կը լինի լիակատար: Պէտք է տեղեկութիւններ ժողովել ոչ միայն ծովերի, կամ տղամարդկանց մասին, այլ ազգայնականութեան ամբողջ կազմութեան մասին, առանց բացառութիւնների:

Պէտք է պարզվեն թէ սեռը, թէ հասակը, թէ ծննդավայրը, թէ պարագմունքը, թէ լեզու, ազգութիւնը, թէ դասակարգը, թէ իրօնը, թէ զբաղմունքիւնը և թէ այլ հանգամանքներ, որոնց ուսումնասիրութիւնը կարեւոր է ժողովրդական կեանքի ճիշդ նկարագիրը կազմելու համար:

Այդպիսի մանրամասն վիճակագրութիւն կունենայ զիտանական, զործնական և հասարակական մեծ նշանակութիւն: Դրա միջոցով կը պարզվի ժողովրդի աճման վիճակը երկրի զանազան մասերում, մարդկանց տեղափոխութիւնը, պարագմունքների զրոյթիւնը, սնունդական և դասակարգային յարաբերութիւնները:

Կարեւոր են համարում շեշտել և մի կէտի վրա, որ պէտք է մեծ նշանակութիւն ունենայ առաջիկայ վիճակագրութեան միջոցին: Դա այն է, որ նա պէտք է կատարվի մի օրում, ամբողջ Ռուսաստանում, սկսած Հիւսիսային ովկիանոսից մինչև Պարսկաստան, և արևմտեան սահմանները:

Ժանդաղ ջրով: Գօնդը մտնում է ս. Ղազարի նաւահանգիստը և իսկոյն այցելում զգում է, որ հասել է մի տեղ, ուր տիրում է հանգստութիւն, աշխատանք և աղօթք: Իմ մօտենալուն պէս լսվեցան պարտիզի պարսպի յետեից մի քանի երկաթաբեկի — աշակերտների ձայնը, բայց իսկոյն զրանք էլ լսեցին և կղզին ընկղմվեց կատարեալ լուսութեան մէջ:

Գոնապանի հարցին պատասխանելով, ես յայտնեցի, որ ցանկութիւնս է հայր Ղ. Ալիշանին տեսնելու և յանձնեցի նրան իմ այցելումը:

Իմ սիրելի վարժապետը շուտով երևեցաւ և տալաւ ինձ վանքի սրնապատ տանքով, որ չըջապատում է արմաւենիներով և զանազան այլ հարաւային բոցերով և ծաղիկներով զարդարված միջին քառակուսին: Սինանցքի մէջտեղը հաւաքվել էին, ճաշը վերջացնելուց յետոյ, հայրերը, նրանց մէջ կանգնած էր և արքայազն Կիրակոսը: Սրան չըջապատողները մեծ մասով երիտասարդ վարժապետներ էին: Ահամայնց խօսակցութեան առաջին հիւսիսը եղաւ Հայաստանը և նրա կենտրոնը, Երվանդը և ոչ թէ ս. Ղազարը կամ մի բնակված երկրի, Գերմանիան: Հայրերը սկզբից և եթ հարց ու փորձ էին անում ինձ Կովկասի ազգայնիկների կեանքի մասին: Նրանց հետաքրքրութիւնը ես կարողացայ մասամբ զորանով զոհանել, որ պատմեցի անցեալ տարի տեսածներս, բայց աւանդ չը կարողացայ ոչ հին

մաներից մինչև Մեծ ովկիանոսը: Միօրեայ վիճակագրութիւնը ունի այն նշանակութիւնը, որ բոլոր երևոյթները և իրողութիւնները ուսումնասիրվում են մի աժա՛նակ:

Եթէ նոյն իսկ անկարելի եղաւ ամեն մի կէտում մի և նոյն օրը կատարել վիճակագրութիւն — պէտք է հետեւալ օրերի վիճակագրութիւնը կազմել այն օրվայ վերաբերութեամբ, այն օրվայ իրերի դրութեամբ:

Առաջիկայ վիճակագրութիւնը այնքան կարեւոր և մեծ նշանակութիւն ունի թէ զիտութեան և թէ բազմաթիւ զործնական նպատակների համար, որ պէտք է վիճակագրութեան զործը ժողովրդացնել, հասարակութիւնը պատրաստել վիճակագրութեան համար, որպէս զի նա կատարելապէս հասնի իր նպատակներին:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

I

Անգլիական «Contemporary Review» ամսագրի օգոստոսի համարում Լաիլ Կիլլան զետեղել է մի յօդուած «Հայաստանի դրութիւնը» (The Condition of Armenia) անունով, որի մէջ նկարագրում է Հայաստանում տիրող վիճակը ամենամալ գոյնբերով:

Յօդուածագիրը ասում է՝ ճիշդ է, որ Սասունի կոտորածը սարսափեցնում է մարդու, բայց Սասունի կոտորածը համեմատելով այն բազմաթիւ մասնաւոր կոտորածների հետ, որ երկրի զանազան մասերում տեղի ունեն իւրաքանչիւր օր և չարաթի, շատ անշան է: Հայերին ծեծում են և բռնադատում, կանանց և կոյս աղէկներին բռնաբարում են, սրբութիւնները անարգում: Նոյն իսկ այն անձանց, որոնք զալիս էին քննիչ յանձնաժողովի եւրոպական անդամներին ներկայացնելու իրանց գանապանները և տեղեկագիրները, բռնում էին և ենթարկում ամեն տեսակ չարաբանքների: Մարդկանց մազերը պոկում էին և նրանց մարմինները այրում չիկացրած երկաթով, և այլն և այլն:

Կիլլանը իր այդ յօդուածում համակրանքով է խօսում Ռուսաստանի մասին և յայտնում է, որ Ռուսաստանի ներկայացուցիչը վերաբերվում էր իր գործին ամենամեծ բարեկրօնութեամբ:

պատմական տեղերի և աւերակների, ոչ էլ այժմեան կրօնական կեանքի կենտրոնի մասին միութեամբ լուրեր հաղորդել:

Այն հոգեբանականի առաջ, որոնք սերունդ սերունդ աշխատել են վերածնել Հայաստանի թէ՛ գրաւոր, թէ՛ զեղարուեստական պատմական յիշատակները, ես ստիպված եմ խօստովանել, որ մեր հոգեբանականութիւնը անհոգ և անտարբեր է վերաբերվում անցեալին, աւերակները ոչ թէ չարութեամբ է նրանց կատարեալ ոչնչանալուն: Հին աւերակներին աւելացնում է նորերը հաւատացնելով, որ մի բան կառուցանում է: Եւ միաժամ և էջմիածնապատկան հողերի և զիւղերի դրութեան իմ նկարագիրը ամենքի կենտրոնի վրա մի տիւտր ժողով յարուցեց, որի մէջ նրա կատարում էր յուզմունք, ցաւակցութիւն, վրդովմունք, որոնք և արտայայտվեցան մի չար հարցերի մէջ: Աւելի միմիկարական չէին կարող լինել և իմ պատմածները մեր հոգեբանականութեան բռնած դիրքի մասին ուսումնասիրական և ժողովրդի իրաւունքների հարցերում:

Մենք յետոյ մի պոռոյտ արինք վանքի շինութեան և այլու մէջ: Ինձ ցոյց տուին թանգարանը, ժողովածուները, պատկերները, որոնց թիւում զանազան են և մի քանի երեւելի իտալացիների նկարներ: Հրդեհը, որ, ինչպէս յիշում է

Յօդուածը մեծ տպաւորութիւն է անում: Անգլիական «Daily Chronicle», «Daily News», «Manchester Guardian»-ի մէջ կարդում ենք քաղաքական և մեկնութիւնների այդ յօդուածի վերաբերմամբ:

II

«Новости» լրագիրը, իր յուլիսի 28-ի համարում մի առաջնորդող նուիրելով հայոց հարցի առիթով Գլադստօնի ասած ճառին, ի միջի այլոց գրում է հետեւեալը. «Պատկառելի Գլադստօն, որը արդէն հրաժարվեց ազատամիտ կուսակցութեան զեկավարի դերից և դուրս եկաւ պարլամենտից, բարձրացրեց իր աշխու ձայնը ի պաշտպանութիւն ճշգրիտ հայերի:

«Հայոց հարցի առիթով նրա՝ հինգշաբթի օրը արտասանած ճառը առաջնակարգ քաղաքական նշանակութիւն ունի, որը աւելի էլ նշանակութիւն է ստանում նրանով, որ հայոց հարցի առիթով Բ. Դրան նոր պատասխանը, չը նայելով նրա արած զիջումներին, գոհացում չէ տալիս պետութիւններին»:

III

Լօնդօնից «Нов. Время» լրագրին հեռագրում են յուլիսի 26-ից հետեւեալը. «Կիպլօմատիական շրջաններում ցաւում են, որ Գլադստօն իր ճառի մէջ յիշեց Բօսնիայի և Հերցեգովինայի՝ աւստրո-ունգարական նախկին փոխարքայ բարոն Կալայի թեկնածութեան մասին Հայաստանի փոխարքայի պաշտօնի համար: Այդ թեկնածութեան միտքը ծագում է անգլո-հայկական ընկերակցութեան շրջանից:

«Գլադստօնի նորից քաղաքական ասպարէզ դալու մեծ նշանակութիւնը տեսնում են նրանում, որ զրանով պաշտպանվում է այն տարածված համոզմունքը, թէ մարկիզ Սօլսբորի ամեն միջոցներով իրաւաւորում է անգլիական հայապէնների ազդեցութիւնը, ամենքին անպայտ նպատակներով: Պահպանողականների մեծ մասը ցաւում է դրա մասին»:

ՕՐՎԱՅ ՀԱՐՅՈՒՆ

XXXIII

—Միթէ հայոց հարցը այս անգամ էլ կը թաղեն,—ասա այն սովորական հարցը, որով այսօր ամենքը զիմում են միմեանց, հիստորիկալ, կրօնապատկառ, թախիծը դէմքին:

Ընթերցողը, մի քանի տարի սրանից առաջ պատահեց, բաղաւորապէս շատ վնաս չը տուեց. նշանաւոր և արժէք ունեցող իրերը, ձեռագիրները, պատկերները աղատվեցան և ապահով տեղ մնացին: Հրդեհը մասամբ և օգուտ չեց վնասել, որովհետեւ առիթ տուեց շինութիւնը նորոգելու, ժամանակ, նրան ընդարձակելու և պիտոյններին յարմարեցնելու: Այդու մէջ ես այցելեցի և «Վառնի լիճ», ջրի մի աւազան, որին տրվեց Հայաստանի յիշված լճի ձևը. տեսայ այն հանգստի աղբիւրը, որ բաւական առատ բղխում է մի հորից և որի ջուրը ծծաբլրածին դաղի մեծ քանակութիւնից փոխրում, ետում է. տեսայ և ախարը, իր բազմաթիւ կովերով:

Հայր Ալիշանը տարաւ ինձ իր խուղը և ի միջի այլոց ցոյց տուեց զբերի պահարանը, որի զբոնները նախորդ գիշերը երկրաշարժից բացվեցան: Վերջապէս երբ հրաժեցու էի առնում նրանից, նա ինձ հրաւիրեց հետեւալ օրը դարձեալ գալ վանքը, ուր պիտի պատարագ մատուցանվէր և պատարագիչ պիտի լինէր նորըմայ քահանայները մէկը: Նա հրաւիրեց ինձ նաև ընդհանուր ձայնի մասնակցել, կամ ինչպէս նա ժողովուրդը ասեց լիանապուր ուտել, ակնարկելով Ա. Նրիցեանի «Հայոց կաթողիկոսութիւնը» աշխատանքի երկրորդ հատորի սկզբում տղած կաթողիկոսի նամակին:

Միւս օրը ես դարձեալ Ա. Ղազար եկայ: Պա-

